ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 150-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 3-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.029 հա (ծածկագիրը՝ 10-008-0054-0054, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը և հողամասի վրա առկա անասնաբուժարանի շենքը՝ 82,16 ք/մ, հասցե՝ ՎՁՄ Արենի համայնք գյուղ Արենի 4-րդ փողոց 21, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել անշարժ գույքի կադաստրային արժեքի 100%-ից ոչ պակաս, 3 020 000 շինության համար և 355 000 հողամասի համար, ընդամենը՝ 3 375 000 ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.05708 հա (ծածկագիրը՝ 10-008-0054-, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ ՎՁՄ Արենի համայնք գյուղ Արենի 4-րդ փողոց 21/1 , աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ից ոչ պակաս 700 000 ՀՀ դրամ:

3. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.06772 հա (ծածկագիրը՝ 10-004-0124-, հողատեսքը՝ այլ) գյուղատնտեսական նշանակության հողամասը